



Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման ընթացակարգ

1. Ընդհանուր դրույթներ

Սույն ընթացակարգը սահմանում է ԵԹԿՊԻ-ի զարգացման ռազմավարական ծրագրի նախապատրաստման, պլանավորման, մշակման փուլերը, գործընթացի պատասխանատուներին, շահակից կողմերի ընդգրկվածությունը, ինչպես նաև գործընթացի մշտադիտարկման, վերլուծության և բարելավման շարունակական բնույթը:

Գործընթացի նպատակը, մուտքային և ելքային տվյալները, նկարագրությունը, գործընթացի մշտադիտարկման մեթոդները ներկայացված են ստորև:

Գործընթացի անվանումը	Ռազմավարական պլանավորում
Գործընթացի ընդհանուր պատասխանատու	ԵԹԿՊԻ-ի ռեկտոր
Գործընթացի նպատակ	<ul style="list-style-type: none"> • Ինստիտուտի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործման համար գործողությունների մշակում, • ինստիտուտի գործունեության պարբերաբար բարելավում, • մրցունակ մասնագետների վերապատրաստում և կատարելագործում, • ինստիտուտի հեղինակության և վարկանիշի բարձրացում, • որակյալ և շարունակական կրթության գործընթացում պետության, քաղաքացիների, հասարակության և աշխատուժի պահանջների բավարարման համար համապատասխան պայմանների ապահովում, • ԵԹԿՊԻ-ի բյուջեի ձևավորում,

	<ul style="list-style-type: none"> ներուծի զարգացում (մարդկային, նյութատեխնիկական, ֆինանսական, ինտելեկտուալ ռեսուրսներ), միջազգային ասպարեզում գործունեության ընդլայնում:
Գործընթացի մուտք	<ul style="list-style-type: none"> Նորմատիվային փաստաթղթեր, ինստիտուտի կանոնադրությունը, ինստիտուտի խորհրդի որոշում, առաքելությունն ու նպատակները որակի ասպարեզում, ինստիտուտի կառավարման կազմակերպական կառուցվածքը, ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի վերլուծություն ինստիտուտի ստորաբաժանումների կողմից, ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի վերլուծություն որակի ապահովման տեսանկյունից ներքին և արտաքին գործոնների համադրությամբ, սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում ներքին և արտաքին շահակիցների պահանջներ:
Գործընթացի ելք	<ul style="list-style-type: none"> Ինստիտուտի զարգացման ռազմավարական ծրագիր, առաքելությունը, քաղաքականությունը և նպատակները որակի շրջանակներում, ինստիտուտի խորհրդի որոշումը, ինստիտուտի կառավարման կազմակերպական կառուցվածքը, ինստիտուտի գործունեության բարելավման համար նախատեսված հրամաններ և ցուցումներ:
Գործընթացի մշտադիտարկում	<ul style="list-style-type: none"> Գործընթացի վերլուծություն ՈԱԿ-ի կողմից որակի կառավարման համակարգի ներքին և արտաքին աուդիտ, վերլուծություն ԵԹԿՊԻ-ի ղեկավարների կողմից:
Արդյունավետության ցուցիչ	<ul style="list-style-type: none"> Զարգացման ՌԾ-ի իրականացված գործողությունների քանակական կամ տոկոսային ցուցիչ:

2. Գործընթացի նկարագրությունը

ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի մշակումը ներառում է գործընթացի իրականացման հետևյալ հիմնական փուլերը.

2.1. ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի մշակման մեկնարկ

2.1.1. Ռեկտորատի կողմից կազմվում է հատուկ հանձնաժողով՝ ընդգրկելով պրոռեկտորներին և ստորաբաժանումների ղեկավարներին: ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի մշակման պատասխանատու է նշանակվում Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը:

2.1.2. Որոշում է կայացվում հանձնաժողովին կից աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ, որը հաստատվում է համապատասխան հրամանով:

2.2. Ներկա իրավիճակի վերլուծություն

Աշխատանքային խմբերը վերլուծում են ինստիտուտի ուժեղ և թույլ կողմերը, առանձնացնում հիմնական հնարավորություններն ու վտանգները (SWOT վերլուծություն կամ այլ վերլուծական մեթոդներ):

Վերլուծությունը իրականացվում է վերջին 5 տարիների ՌԾ-ի հիման վրա՝ ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններով՝

- Կրթական, գիտական և ինովացիոն գործունեություն
- Ուսանողների հետ տարվող աշխատանք
- Միջազգային համագործակցություն
- Ֆինանսատնտեսական գործունեություն
- Կադրային ներուժ
- Ընդհանուր կառավարման կազմակերպում
- Հասարակական կապեր

Վերլուծության արդյունքերը հաշվետվության տեսքով ներկայացվում են ՈԱԿ ղեկավարին: ՈԱԿ ղեկավարը հանձնաժողովի նիստի ժամանակ ներկայացնում է ներքին և արտաքին գործոնների համեմատական վերլուծությունը:

2.3. ԵԹԿՊԻ-ի զարգացման ռազմավարական ուղղությունների սահմանում

Ներքին և արտաքին գործոնների վերջնական վերլուծության արդյունքների հիման վրա սահմանվում է ինստիտուտի որդեգրած քաղաքականությունը, ըստ որի հանձնաժողովը մշակում է զարգացման ՌԾ-ի ուղղությունները:

2.4. Զարգացման ուղղություններով նախագծերի մշակում

Համապատասխան աշխատանքային խմբերը մշակում են սահմանված ուղղությունների նախագծերի բովանդակությունը՝ հստակեցնելով ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի նպատակները: Մշակված փաստաթղթերը պետք է համապատասխանեն ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման համակարգի պահանջներին և նպատակներին:

2.5. Մշակված նախագծերի վերլուծություն և գնահատում

Զարգացման ՌԾ-ի մշակման հանձնաժողովը բոլոր ուղղություններով գնահատում է նախագծերի որակը և որոշում՝

- հաստատել իրականացված նախագծերն ամբողջությամբ
- չեղյալ հայտարարել ներկայացված նախագծերը՝ վերադարձնելով վերամշակման:

Նախագծերի հաստատումից հետո ինստիտուտի պրոռեկտորների կողմից իրականացվում է անհրաժեշտ նյութական, կադրային, ֆինանսական ռեսուրսների գնահատում և ներկայացվում ռեկտորին:

2.6. ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի նախագծի մշակում

Զարգացման ՌԾ-ի մշակման հանձնաժողովը, հիմք ընդունելով ռազմավարական ուղղություններով նախագծերի մշակված տարբերակները, քննարկումից հետո հստակեցնում է զարգացման ՌԾ-ի կառուցվածքը, կազմում զարգացման ՌԾ-ի նախագիծը և ներկայացնում Գիտական խորհրդի հաստատմանը: Գիտական խորհրդի քննարկումից հետո որոշվում է՝

- հաստատել մշակված նախագիծը և սկսել դրա իրականացման գործընթացը
- չեղյալ հայտարարել այն և ուղարկել զարգացման ՌԾ-ի մշակման հանձնաժողովին՝ վերամշակման:

2.7. ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի հաստատում և ներդնում

ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի նախագիծը հաստատվում է ԵԹԿՊԻ-ի խորհրդի կողմից, որից հետո ռեկտորը արձակում է զարգացման ՌԾ-ի կիրարկման հրաման:

2.8. Ծրագրի առանձին գործողությունների իրականացում և մշտադիտարկում

ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի հաստատված տարբերակի հիման վրա պատասխանատու անձիք իրականացնում են ծրագրի առանձին գործողությունները, որոնք արտացոլվում են նրանց տարեկան հաշվետվություններում:

ՈԱԿ-ի կողմից մշտադիտարկվում է զարգացման ՌԾ-ի գործողությունների իրականացման արդյունավետությունը և կատարվում գործընթացի վերլուծություն:

Յուրաքանչյուր տարի ԵԹԿՊԻ-ի խորհրդի նիստի ժամանակ դիտարկվում է զարգացման ՌԾ-ի գործողությունների իրականացումը:

2.9. ՌԾ-ի գործողությունների իրականացման բարելավում

Որակի ապահովման կենտրոնի վերլուծության հիման վրա կազմվում է գործողությունների բարելավման պլան:

3. Գործընթացի մշտադիտարկում, վերլուծություն և բարելավում

Գործընթացի մշտադիտարկումը իրականացվում է գործընթացի փուլերի հիման վրա՝ ներկայացված հավելված Ա-ում: Մշտադիտարկման պատասխանատու է հանդիսանում ՈԱԿ ղեկավարը:

Զարգացման ՌԾ-ի առանձին գործողությունների իրականացումը վերլուծվում է ըստ՝

- ծրագրի առանձին գործողությունների իրականացման
- ՌԾ-ի իրականացման վերաբերյալ տեղեկության (տոկոսային ցուցիչ)
- ՌԾ-ի առանձին գործողությունների չիրականացման պատճառների
- գործողությունների բարելավման պլանի իրականացման արդյունքների:

Վերլուծության արդյունքների հիման վրա գործընթացի պատասխանատուն ներկայացնում է բարելավման առաջարկներ:

4. Գրություններ

Գործընթացի հիմնական գրություններն են հանդիսանում՝

- Ռեկտորի հրաման
- Ներկա իրավիճակի գնահատման վերաբերյալ վերլուծություն
- Ռեկտորի հրաման ռազմավարական ուղղությունների հաստատման վերաբերյալ
- Ինստիտուտի գործունեության բոլոր ուղղություններով ռազմավարական զարգացման նախագծեր
- ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի նախագիծ
- ԵԹԿՊԻ խորհրդի որոշում
- Ռեկտորի հրաման ՌԾ-ի ներդրման վերաբերյալ
- Ծրագրի առանձին գործողությունների իրականացման վերաբերյալ հաշվետվություն
- Զարգացման ՌԾ-ի վերլուծության մասին զեկույց որակի ապահովման տեսանկյունից
- Գործողությունների բարելավման պլան:

Հավելված Ա Պարտականությունների և լիազորությունների բաշխման աղյուսակ

Գործողության անվանումը	Պատասխանատու	Իրականացնող	Պարտականությունների շրջանակը
1. ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի մշակման հանձնաժողովի ստեղծում	Ռեկտոր	ՈԱԿ ղեկավար	ՌԾ-ի մշակման համար հանձնաժողովի կազմում
2. Աշխատանքային խմբերի կազմի հաստատում	Ռեկտոր	ՈԱԿ ղեկավար	Աշխատանքային խմբերի ձևավորում՝ ըստ ռեկտորի հրամանի
4. Ներկա իրավիճակի վերլուծություն	Ռեկտոր	ՈԱԿ ղեկավար	Ներկա իրավիճակի վերլուծության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն
5. ԵԹԿՊԻ-ի զարգացման ռազմավարական ուղղությունների սահմանում	Ռեկտոր	Զարգացման ՌԾ-ի մշակման հանձնաժողով	Բուհի զարգացման ռազմավարական ուղղությունների սահմանում՝ ներքին և արտաքին գործոնների վերլուծության հիման վրա
6. ԵԹԿՊԻ-ի զարգացման ուղղություններով նախագծերի մշակում	Ռեկտոր	Աշխատանքային խմբեր	ԵԹԿՊԻ-ի զարգացման ուղղությունների բովանդակության մշակում
7. Մշակված նախագծերի վերլուծություն և գնահատում	Ռեկտոր	Զարգացման ՌԾ-ի մշակման հանձնաժողով	Մշակված նախագծերի վերլուծություն և գնահատում հանձնաժողովի կողմից
8. ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի նախագծի մշակում	Ռեկտոր	Զարգացման ՌԾ-ի մշակման հանձնաժողով	Կառուցվածքի հստակեցում, ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի նախագծի մշակում
9. ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի նախագծի հաստատում	Ռեկտոր	ԵԹԿՊԻ-ի խորհուրդ	ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի նախագծի հաստատում
10. ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌԾ-ի ներդրման հրամանի արձակում	Ռեկտոր	ՈԱԿ ղեկավար	Հրամանի պատրաստում և արձակում
11. Ծրագրի առանձին գործողությունների իրականացում և մշտադիտարկում	ՈԱԿ ղեկավար	Աշխատանքային խմբերի պատասխանատուներ	Գործողությունների իրականացում և դրանց իրականացման մշտադիտարկում

12.ՌԾ-ի գործողությունների իրականացման բարելավում	Ռեկտոր	ՌԱԿ ղեկավար	ՌԾ-ի գործողությունների թերությունների հիման վրա բարելավման պլանի մշակում և կիրարկում
---	--------	-------------	---

Գործընթացի տեղեկատվական քարտեզ

№	Գործընթացի մուտքեր	Գործընթացի փուլեր	Գործընթացի ելքեր	Անհրաժեշտ ռեսուրսներ	Գործընթացի կատարողականի ցուցիչներ	Մշտադիտարկման պարբերականություն	Մշտադիտարկման պատասխանատու
1	2	3	4	5	6	7	8
1.	Ռեկտորի հաշվետվություն	ԵԹԿՊԻ-ի ՌՕ-ի վերաբերյալ կայացում	Հանձնաժողովի անդամների հաստատում ՌՕ-ի պատրաստման համար	Անձնակազմ	ՌՕ-ի պատրաստման հրաման	-	ՈԱԿ ղեկավար
2.	Որոշում զարգացման ՌՕ-ի մշակման մասին	Հանձնաժողովի և աշխ. խմբերի ստեղծման մասին ռեկտորի հրաման	Հրաման վերլուծության իրականացման մասին	Անձնակազմ	Ռեկտորի հրաման	-	ՈԱԿ ղեկավար
3.	Ռեկտորի հրաման	Աշխատանքային խմբերի կազմի հաստատում	Աշխատանքային խմբերի կազմ	Անձնակազմ	Աշխատանքային խմբեր	-	ՈԱԿ ղեկավար
4.	Ինստիտուտի վերջին 5 տարիների ՌՕ	Ներկա վերլուծություն	Հաշվետվություններ կա իրավիճակի վերլուծություն	Անձնակազմ	Վերջնաժամկետներ	5 տարին անգամ	ՈԱԿ ղեկավար
5.	Հաշվետվություն ներկա իրավիճակի վերլուծության մասին	Արդյունքների քննարկում իրականացված վերլուծության գնահատում	-	Անձնակազմ	-	-	-
6.	Ինստիտուտի վերջին 5	Զարգացման	Նախագծեր բոլոր	Անձնակազմ	Վերջնաժամ	5 տարին	1

	տարիների ՌՕ; Հաշվետվություն ներկա իրավիճակի վերլուծության մասին; Ռեկտորի հրաման ռազմավարական ուղղությունների հաստատման մասին	ուղղություններով նախագծերի մշակում	ուղղություններ- ըով	ազմ	կետներ	անգամ	
7.	Բոլոր ուղղություններով նախագծեր	Մշակված նախագծերի վերլուծություն գնահատում	-	Անձնակ ազմ			
8.	Բոլոր ուղղություններով նախագծեր Հաշվետվություն ներկա իրավիճակի վերլուծության մասին Ինստիտուտի վերջին 5 տարիների ՌՕ	ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌՕ-ի նախագիծ մշակում	ԵԹԿՊԻ զարգացման ՌՕ- ի նախագիծ	Անձնակ ազմ	Վերջնաժամ կետներ	5 տարին անգամ	ՈԱԿ դեկավար
9.	ԵԹԿՊԻ զարգացման ՌՕ-ի նախագիծ	ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌՕ-ի քննարկում և գնահատում	-	Անձնակ ազմ			
10.	ԵԹԿՊԻ զարգացման ՌՕ-ի նախագիծ	ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌՕ-ի հաստատում	Ռեկտորի հրաման ԵԹԿՊԻ զարգացման ՌՕ- ի նախագծի հաստատման մասին	Անձնակ ազմ			

11.	ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌՕ-ի նախագիծ Ռեկտորի հրաման ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌՕ-ի նախագծի հաստատման մասին	ԵԹԿՊԻ-ի ՌՕ-ի ներդրման հրմանի հաստատում	Ռեկտորի հրաման ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌՕ-ի նախագծի հաստատման մասին	Ռեկտորի հրաման ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌՕ-ի նախագծի հաստատման մասին	Ռեկտորի հրաման ԵԹԿՊԻ-ի զարգացման ՌՕ-ի նախագծի հաստատման մասին	ՌԱԿ ղեկավար
12.	Ռեկտորի հրաման Տարին 1 անգամ	Վերջնաժամ կետեր	Մանկակ Մանկակ Մանկակ	Մանկակ Մանկակ Մանկակ	Մանկակ Մանկակ Մանկակ	ՌԱԿ ղեկավար
13.	Հաշվետվություն ուսումնական տարվա կտրվածքով գործողությունների իրականացման մասին	Վերլուծություն ապահովման տեսանկյունից	Որակի կառավարման համակարգի բարելավում	Որակի կառավարման համակարգի բարելավում	Որակի կառավարման համակարգի բարելավում	ՌԱԿ ղեկավար
14.	Հաշվետվություն վերլուծության որակի ապահովման տեսանկյունից	Ֆորժորություններ ընդհանուր	Ֆորժորություններ ընդհանուր	Ֆորժորություններ ընդհանուր	Ֆորժորություններ ընդհանուր	ՌԱԿ ղեկավար

Փոփոխությունների գրանցման ցուցակ

№	Փոփոխության կատարման, լրացումների կամ աուդիտի իրականացման ամսաթիվ	Էջերի համարներ	Փաստաթղթի շիֆր	Փոփոխության համառոտ նկարագրություն, աուդիտի դիտարկումներ	Անուն, ազգանուն	Ստորագրություն
1	2	3	4	5	6	7
1.						
2.						
3.						
4.						
5.						
6.						
7.						
8.						
9.						
10.						
11.						
12.						
13.						
14.						
15.						
16.						
17.						
18.						
19.						
20.						
21.						
22.						
23.						
24.						
25.						
26.						
27.						
28.						
29.						
30.						